

«ԲԱՂ ՏՈՒԵՔ ՄԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ» ԳՈՒԿ ԺԸ 16

ՀԱՏՈՐ ԼԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆ ՈՒՍԱՐ 1, 1906

ԹԻԻ

ԲԱՏԱՌԻ ԱՐՁԸ

Կարծեմ մեր փոքրիկ ընթերցողներէն շատը տեսած են այս երկրի հասարակ թուխ արջը ոչ թէ իր վայրենի վիճակին մէջ, այլ ինչպէս շղթայով կը պտըտցուի փողոցներուն մէջ գեղացիներու ձեռքով, որոնք զանիկա կը թած են իր ետեւի սրունքներուն վրայ խաղալու և ուրիշ բաներ ընելու: Այս արջերը շատ վտանգաւոր կենդանիներ չեն հակառակ իրենց մեծ ոյժին, վասն զի ընդհանրապէս խոտ և բանջարեղէն կ'ուտեն: Կենդանիի մը բնական ուտելիքը աւոր տկուաներէն կը հասկցուի: Մսակեր կենդանիի մը ակուաները, ինչպէս կատուիները կամ վագրիները, շատ տարբեր են խոտակեր կենդանիին ակուաներէն, ինչպէս են կովուն կամ ոչխարին ակուաները: Արջ արջուն ակուաները, մարդուն ակուաներուն նման, երկու տեսակէն ալ են, որմէ կը հասկցուի որ թէ՛ միս և թէ՛ խոտ ուտելու համար են: Արջու տեսակներ կան որոնք գրեթէ բոլորովին բուսեղէններով կ'ապրին, իսկ ուրիշ տեսակներ, ինչպէս Ամերիկեան գորշ արջը, գրեթէ բոլորովին կենդանական ուտեստով այսինքն մտեղէնով կ'ապրին, և ուստի աւելի վտանգաւոր են: Բեւեռային ճերմակ արջը մեծ մասամբ ձուկով և փակով կ'ապրի, և ընդհանրապէս ամէնէն խոշորը կը նկատուի արջու բոլոր տեսակներուն մէջ: Բայց կայ ֆատիաք անունով կղզի մը Ալաբաջի մօտ Հիւսիսային Ամերիկայի հիւսիսային սրևմտեան կողմը, ուր աւելի մեծ տեսակ մը կը գտնուի: Եղի մը չափ մեծ է, և ճիշդ եղի պէս խոտ կ'ուտէ. բայց ձուկ ալ կ'ուտէ, ինչպէս կը ցուցուի այս պատկերին մէջ: Յօրատ կիմաներու միւս արջերուն պէս ձմեռը կ'անցնէ երկարաձև քունով մը: Աշխարհիս

զանազան կողմերը գտնուած ոսկորներ կը ցուցնեն թէ հին ժամանակները հիմակուաներէն շատ աւելի խոշոր արջեր կային:

որ մը խաղալու վրայ էին, երբ յանկարծ պարիկ (փէրի) մը երեցուտնոց ու ըսաւ. «Ես ձեզի մէյուկ կ'սպանցչէք տալու համար գրկուած



ՊԱՐԻՍԻՆ ԿԱՂԱՆԴԵՔԸ
երկու փոքր տղաք, Պերճ և Հրանտ:

եմ» Այս ըսելով անոնց մէկէկ ծրար տուաւ և իսկոյն անհետացաւ:

Պերճ և Հրանտ ծրարները բացին և երկուքին մէջ ալ միևնոյն բանը գտան — գեղեցիկ գիրք մը, նոր իջնող ձիւնի հատիկներու նման ճերմակ, մաքուր, և սիրուն էջերով:

Անկէ բաւական ժամանակ ետքը, պարիկը դարձեալ երեցաւ տղոց և ըսաւ. «Չեզի մէյմէկ նոր գիրք ալ բերի, սակայն առաջուանները պիտի տանիմ Հայր Ժամանակին որ զանոնք ձեզի զրկեց: «Քիչ մը աստե՛ն ալ քովս չե՛մ կրնար պահել իմս» ըսաւ Հրանտ, «հազու վերջերս ժամանակ ունեցայ անոր վրայ մտածելու, կը փափաքէի քանի մը բաներ գծել անոր վերջին էջին վրայ:» «Ո՛չ» պատասխանեց պարիկը, «ճիշդ ներկայ վիճակին մէջ տանելու եմ»: «Երանի՛ թէ անգամ մ'ալ ես իմինս աչքէ անցընէի» ըսաւ Պերճ, «մէկ անգամին միայն Քիչ էջը տեսած եմ, քանզի երբ էջ մը կը բանայի յաջորդը այնքան պինդ փակած կ'ըլլար, որ անկարելի էր մէկէ աւելի էջեր դիտել միևնոյն ատեն»: «Չենէ իւրաքանչիւրը իւր գիրքին պիտի նայի» ըսաւ պարիկը և մէյմէկ արծաթեայ փոքրիկ կանթեղ վառեց, որուն լոյսին շնորհիւ անոնք կարողացան իրենց գիրքերը աչքէ անցնել մինչ պարիկը կը դարձնէր մէկիկ մէկիկ, Տղաքը հիացմամբ կը դիտէին կարելի էր որ ասոնք տարի մը առաջ իրենց տրուած գիրքերն ըլլային. սէր էին ձիւնի նման ճերմակ, մաքուր և շինջ էջերը: Հոս էջ մը կար կոշտ սև բիծերով, վրան ալ սկրթուած, մինչդեռ յաջորդ էջին վրայ նկարուած էր սիրուն նկար մը. էջերէն մէկ քանիին մէջ ալ նկարուած էին սիրուն պատկերներ, ոսկիի և արծաթի վառ գոյներով ուրիշներ՝ գոյնզգոյն ձաղկներով. կային ալ որ կը ցուցընէին ծիածանը իր ճոխ և աչքառու փայլունութեամբ. այսու ամենայնիւ տեղ տեղ բիծեր, սկրթութիւններ կը հանդիպէին դիտողներու աչքին: Վերջապէս Պերճ և Հրանտ նայեցան պարիկին երեսն ի վեր և հարցուցին զարմանքով, «Ո՞վ ըլլած է ասոնք, երբ մենք իւրաքանչիւր էջը բանայինք՝ ճերմակ և մաքուր կը գտնէինք, իսկ հիմա դատարկ էջ մը անգամ չկայ ամբողջ գիրքին մէջ»: «Պատկերներէն մի քանին մեկնեմ ձեզի» ըսաւ պարիկը, ժպտելով երկու տղոց: «Տես, Հրանտ, այս դեռաբողբոջ ծաղկի փունջը հոս նկարուեցաւ երբ դուն թոյլ տուիր որ պէպէքը խաղայ քու խաղալիկներով: Այս սիրուն

թուշունը որ այնքան խորամանկ կ'երևայ, և կարծես թէ կ'երգէ իր ձայնին բոլոր թափով՝ այս էջին վրայ երբէք պիտի չերևէր եթէ դուն չլայնայիր ազնիւ և հեղահարտոր ըլլալ, փոխանակ դեզ և կռուասէր ըլլալու»: «Բայց այս արատներն ո՞վ ըրաւ»: հարցուց Հրանտ: Պարիկը, իր ձայնին տխուր շեշտ մը տալով, պատասխանեց, «Ատիկա եղաւ երբ դուն օր մը սուտ խօսեցար, և ասիկա՛ երբ օր մը չհնազանդեցար մայրիկին: Չեր երկուքին գիրքերուն մէջ ալ գտնուած այնքան կոշտ ու սգեղ աղաւերն ու սկրթութիւններն եղան այն


կրնաք զանոնք ասոնցմէ աւելի լաւ գործածել»:

Աս ըսելով աներևոյթ եղաւ և տղաք առանձին մնացին, իւրաքանչիւրը ձեռքը գիրք մը բռնած, առաջին էջը բաց դիրքով. գիրքերուն ետեւ գրուած էր «1903» Անկա նոր տարիին գիրքն էր:

Թալաս Մ. Կ. Հ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԳԱՐԱՅԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Մարդիկ տուն կամ մինչև անգամ խրճիթ չինել սորվելէ առաջ վայրի կենդանիներու պէս քարայրներու մէջ կը բնակէին, և մարդկային ամէ-



ատեն երբ դուք չար եղաք ուէ կերպով, երբ անհնազանդ գտնուեցաք ձեր ծնողաց և ձեր ուսուցիչներուն: Ամէն լաւ և հաճելի բան ձեր գիրքին մէջ եկաւ ձեր բարութեան և համեստութեան համար, իսկ աղտ ու բիծ գոյացան ձեր անվայել ընթացքին համար:

Ո՛հ, երանի՛ թէ անգամ մ'ալ կարենայինք զանոնք վայելել» ըսին Պերճ և Հրանտ: «Ատիկա անկարելի է» ըսաւ պարիկը, «տեսէք, անոնք թուագրուած են 1903 և երթալու են Հայր Ժամանակին զբաղարանը, բայց ձեզի մէյմէկ հատ նոր գիրք բերի:

նէն հին մնացորդները որոնք գտնուած են, քարայրներու մէջ բնակողներու ոսկորներն են, նաև անոնց՝ գործածած քարէ կամ ոսկորէ գործիքները: Դարերով աւելի վերջերը կը գտնուէին քարայրի մէջ բնակող ուրիշներ, ուրոնք իրենց համար սենեակներ կը փորէին կակուղ ժայռերու մէջ, և զանոնք իրենց բնակարան կ'ընէին: Հիմա ալ կը գտնուին ասանկ փորուածքներ և կը գործածուին իբրև մարդկային բնակարան: Ասկէ երեսուն տարիներէ աւելի առաջ գիշեր մը անցուցինք Հասանքէօյ գեղին մէջ Տիգրիս գետին մօտ, և շատ հետա-

քրքրաչարժ տեղ մը գտանք զանիկա։ Բոլոր տունները ժայռի մէջ փորուած խորշերէ կը բաղկանան, և տուններուն մէկ կարգին ծածքը աւելի վեր գըտնուած կարգին փողոցն է։ Ծածքերը երբեք ջուր չեն կաթեցներ, և տունները զով են ամառը և աւելի տաքուկ են ձմեռը։ Անոնք մէկ կողմէն միայն կրնան պատուհան ունենալ, որ պակասութիւն մըն է, և սակայն չլեցնինք թէ գեղացիք միւս գեղերու բնակիչներէն նուազ առողջ են։

Երեք տարի առաջ ամառուան վերջերը Նէվիլ Նիլի և Իրիկուպի մէջտեղ քանի մը նշանաւոր քարայրէ բնակարաններ ալցեցեցինք, մեր դէպի կեսարիա ճամբուն վրայ, և անոնց վրայով գրեցինք մեծ Աւստրալիան մէջ։ Հիմա այս քարայրներուն մէջ մարդ չընակիր, բայց յայտնի է թէ աւելի մեծ քանի մը սենեակները իբրև եկեղեցի դորձածուած են ժամանակաւ, և մէկ քանին իբրև ճաշարան։ Եկեղեցիներուն մէջ սուրբերու պատկերներ կան, և ճաշարաններուն մէջ սեղաններ և նստարաններ՝ ամեն ալ քարէ փորուած։ Տեղին անունն է Կէօթմէ, և անկէ հեռու չէ այս պատկերին մէջ ցուցուած բլուրը, որ կը կոչուի Ուճ հիսարը։ Դուք կրնաք տեսնել ժայռին մէջ փորուած խոռոչները։ Բայց անոնց մէջ բնակած ճգնաւորները հոն չեն այլ ևս։

ԼՐԱԳՐԱՎԱՅԱՌ ՏՂԱՆ

«Հոս նայէ, տղայ, լրագիր մը տուր ինձի»։ «Չեմ կրնար տալ»։ «Ինչու»։ Կը լսեմ որ լրագիր կը պոռաս այն քան բարձրաձայն որ շատ հեռուանց կը լսուի»։ «Այո, բայց գիտէք թէ ես միւս թաղին մէջ կը պոռայի»։ «Ինչ փոյթ է ասիկա. եկուր հիմա, ժամանակ չունիմ, ես կ'արտորամ գործիս երթալու»։ «Ես լրագիր չեմ կրնար ծախել հոս այս թաղին մէջ, պարոն, ինչու որ այս լրագիրները Լեոնի կը վերաբերին. հիմա անիկա փողոցին ամէնէն հեռաւոր ծայրը կը գտնուի։ Դուք պէտք է որ Լեոնը տեսնէք»։ «Ո՞վ է Լեոն։ Եւ ինչու անոր պատկանի այս թաղը»։ «Ինչու որ ես և ուրիշ տղաք միաբանութեամբ ասանկ որոշեցինք։ Կը տեսնէք որ շատ քաջել պէտք է բոլոր այն պաշտօնարաններուն և գրասենեակներուն երկայնքովը, և խեղճ տղան կաղ է ու չկրնար միւս տղոց պէս այդչափ տեղեր պարտիլ և իր ապրուստը հանել, ուստի միաբան

որոշեցինք որ միւս տղոցմէն ով որ լրագիր ծախէ այս կողմերը, լաւ ծեծ մը ուտէ, Կը հասկնա՞ք»։ «Այո, կը հասկնամ։ Դուք տեսակ մը եղբայրութիւն կազմած էք ձեր մէջ»։ «Այն Լեոն կու գայ»։ «Ինչ բաղդաւոր տղայ է եղբը որ ասանկ բարեկամներ ունի»։

Մարդը երկու լրագիր գնեց Լեոնէ և իր ճամբան գնաց փողոցն ի վար, մտածելով թէ քանի՞ հոգի կը գտնուի գործի մարդոց մէջ որոնք չուզեն ծախել իրենց վաճառքը, տկար և կաղ եղբոր մը առիթ տալու համար առևտուրի ասպարէզին մէջ։

ԹՈՍ ԹՂԸՄ

Այս անունը տրուեցաւ գաճաճի (ճիւճէ) մը որ երեսունէ մինչև յիսուն տարի առաջ կը ցուցադրուէր Ամերիկայի մէջ։ Ատիկա անոր բուն անունը չէ — որ էր Չարլս Սթրէթըն — այլ



այս անունը անոր տրուեցաւ հասկըցընելու համար թէ անիկա հասակով մարդկային բթամատէն շատ աւելի երկայն չէր (Թհրմ բթամատ կը նշանակէ)։ Անոր տունը իմ տունէս քանի մը մղոն միայն հեռու էր, և ինք ինձմէ քանի մը տարի մեծ էր։ Թոմ Թհրմ մեծնալէ դադրեցաւ երբ երկու երեք տարեկան եղաւ։ Եւ Փ. Թ. Պարնըմ, որ յօգուածագրիս հեռաւոր մէկ ազգականն էր, երբ լսեց անոր վրայով, առաւ զանիկա իր թանգարանին համար, ուր անիկա մնաց շատ տարիներ։ Մը. Պարնըմ ժամանակ մը չորս գաճաճներ ունէր. երկու մարդ, և երկու աղջիկ. և Թոմ Թհրմ այն աղջիկներէն մէկուն հետ ամուսնացաւ։ Թոմ Թհրմ հաւանորէն աւելի ստակ շահեցաւ քան որչափ պի-

տի շահէր եթէ հասակի բնական բարձրութեան հասնէր։ Իր մահէն շատ առաջ յիշատակ մը կանգնել տուաւ իրեն, բարձր մարմարին սին մը, գազաթը իր արձանով։ Երկրին մէջ ճամբորդելու համար պզտիկ բայց չքեղ կառք մը ունէր, զոր կը քաշէին զոյգ մը փօքրիկ մատաղածիւր (միտլի)։ Բայց հարստութիւնը օրհնութիւն չեղաւ անոր, վասն զի, եթէ ճշմարիտ է մեր լածը, չար ունակութիւններու վարժուեցաւ և այսպէս փութացուց իր մահը։

ԱՐՏԻՈՒ ՃԱՌԱԳԱՅՅՈՒ ՎԱՐՃՈՒՀԻՆ ՎՐԱՅ

Վարժուհին Օրիորդ Պայծառ յոգնութիւն կը զգար, ամառուան երկար արձակուրդը թուրթիւն բերած էր անոր վրայ, և հիմա որ աշունը վրայ հասած էր բոլոր իր նոր խընդիւններով, անոնց հետ մաքաւելու

քաջութիւն չկար։ Մինչև անգամ շրջակայ տեսարաններուն գեղեցկութիւնը չէր ոգևորեր զանիկա երբ դէպի դպրոց կը քալէր տարեկան առաջին շրջանին առաջին առաւօտը։ Իրեն սպասող քառասուն դէմքեր բարի եկիր ըսին իրեն երբ դպրոցին մէջ իր տեղը գրուեց բեմին վրայ գրասեղանին առջև։

Վարժուհին ըսաւ ինքնիրեն, «Ահա ուրիշ տարի մըն ալ, նորէն առաջուան ձանձրալի դորձը պիտի շարունակուի յախտեան։ Ես քսան տարեկան եմ միայն, և այս պաշտօնին մէջ կը գտնուիմ չորս տարիներէ ի վեր։ Չունիմ ուրիշ ակնկալութիւն, բայց եթէ շարունակել ասիկա յարող տարիներուն մէջ»։

Միտքը ամփոփեց և դաճատուութեան սկսաւ։ Երկայն էր օրը, Տըղաքը սովորած էին լայնարձակ դաշտերուն մէջ ազատ ազատ պարտիլ, և շատ անհանդարտ էին ամառէն ետքը փակուելու այս սկզբնաւորութեան ատենը, Գուրսի շքեղ և գեղեցիկ աշխարհը կը թուէր թէ տղաքը կը հրաւիրէր ուժով մը որ գրեթէ վեր էր անոնց գիմադրելու կարողութեանէն։ Պայծառ ուրախ եղաւ երբ իրիկուան դէմ դպրոցը արձակելու ժամը հասաւ։ Արձակեց տղաքը և սկսաւ իր գրասեղանին դարակները գոցել։ Մէկ վայրկեան ետքը զխարկը գլուխը պիտի դնէր և դպրոցը պիտի գոցէր երթար։ Այն ատեն ինք ալ ազատ պիտի ըլլար։

«Կը խնդրեմ, Օրիորդ Պայծառ»,
 փոքրիկ ձայն մը եկա քիչ մը վախկոտ
 չեչուով մը: Պայծառ ցնցուցեցաւ: Վասն
 զի ինքզինք սրահին մէջ առանձին
 կը կարծէր: Վեր նայեցաւ և տեսաւ
 փոքրիկ աղջիկ մը իր գրասեղանէն
 վար առջևի նստարանին վրայ: Հա-
 ւանօրէն փոքրիկը այդ նստարանին
 վրայ նստած էր ամբողջ օրը, բայց
 Պայծառ ուշադրութիւն տուած չէր
 անոր: Իրողութիւնը սա էր որ վար-
 ժուհին աշակերտներէն ուէ մէկը դի-
 տած չէր մասնաւոր հետաքրքրու-
 թեամբ: Անոնք իրեն համար անհան-
 դարա բազմութիւն մըն էին լոկ:
 Այդ ձայնին մէջ մանկական բան
 մը կար որ Պայծառի համակրանքն
 արթնցուց հակառակ իր կամքին:
 Աչքին հանդիպած դէմքը անոր ձայ-
 նին չափ մանկական էր: Մինչոյն
 պարզութիւնն ու վստահութիւնը
 կ'արտայայտէր: Բայց նաև զարմա-
 նալի խառնուրդ մը կը ցուցնէր չա-
 փահաւոր յատկութեան հետ: Պայծառ
 վշտի զգացումով մը դիտեց թէ ինչ
 պէս աժոյշ և նիհար էր այդ դէմքը:
 Սակայն վիշտը բերկրութեան փոխ-
 ուեցաւ, երբ աչքին զարկաւ աղջկան
 մագերէ որ կը կախուէին անոր ուսե-
 լուն վրայ, ոսկեգոյն խոպոպիքներ,
 գրեթէ այն ոսկին զոր երազած էր
 իր պարիկներու պատմութիւններու
 օրերուն մէջ: «Կը խնդրեմ, Օրիորդ
 Պայծառ», ըսաւ ձայնը նորէն, «կ'ու-
 ղէի քիչ մը խօսիլ ձեզի, եթէ կա-
 ռելի է, և պատմել իմ վրայովս»: Պայծառ
 ժպտեցաւ: «Ինձի խօսելու
 ի՞նչ ունիս», հարցուց քաջալերիչ
 կերպով մը: Պղտիկ աղջիկը կամա-
 ցուկ մը ելաւ իր նստարանէն, դէպի
 վարժուհին եկաւ կարգով, և անոր
 քով կեցաւ վստահ երևոյթով մը:
 «Կ'ուզէի ըսել ձեզի», ըսաւ աղջնակը
 իր մագերէուն պէս արևոտ ժպիտով
 մը, «թէ ես չեմ կրնար կանոնաւոր
 աշակերտ ըլլալ, և կ'ուզէի խնդրել
 ձեզմէ թէ կարելի՞ է որ դպրոց գալ
 անանկ ասաններ երբ կարող ըլլամ:
 Կը տեսնէք թէ ազդրի ցաւ ունիմ»: Ոչ
 մէկ հասարակ խօսք կրնար զրոյց
 ուիլ աւելի պարզ կերպով քան այս
 վերջին պարբերութիւնը: Պայծառ
 զարմացաւ մնաց: Բազուկին մէջ ա-
 ռաւ փոքրիկը և իրեն քաշեց գոյր:
 գուրանքով: «Ի՞նչ, ես դպրոց գալ կը
 սիրեմ», պատասխանեց ջինջ ձայնը
 աշխոյժով: «Շա՛տ կը սիրեմ: Բայց
 ասիկա ի՞նչ է ուրիշներու բաներ

սորվեցնելուն քով ինչպէս դուք կ'ը-
 նէք: Կարծեմ ուրիշներու սորվելուն
 օգնելը աշխարհիս մէջ ամենէն գե-
 ղեցիկ բանն է»: «Գեղեցիկ», պա-
 տասխանեց Պայծառ մտախոհ, և կէս
 մը ամացած: «Երբեմն կը մտնամ ա-
 նոր ի՛նչ գեղեցիկ ըլլալը», «Իրա՛ւ,
 զարմանալի՛ բուն», ըսաւ պղտիկը և
 խնդաց, ելջանիկ, զուարթ ծիծաղով,
 որ համապատասխան ժպիտ մը յա-
 ռաջ բերաւ Պայծառի շրթունքնե-
 լուն վրայ: «Ի՛նչ ելջանիկ փոքրիկ
 ես դուն», ըսաւ: փոքրիկ աղջիկը
 վարժուհին նայեցաւ զոյգ մը պայ-
 ծառ կապոյտ աչքերով: «Այո, Օ-
 րիորդ, կարծեմ ատանկ եմ: Ես գրե-
 թէ միշտ ելջանիկ եմ: Հայրս զիս
 իր փոքրիկ Արևու ճառագայթը կը
 կոչէ, անոր համար որ ես շատ կը
 խնդամ, կ'ըսէ: Ինք պիտի գայ ձեզի
 հետ տեսնուելու ինձի համար և ձեզ-
 մէ խնդրելու որ թոյլ տաք ինձի
 դպրոց գալ ժամանակ ժամանակ մի-
 այն»: «Գուն կրնաս դպրոց գալ երբ
 որ կրնաս», պատասխանեց Պայծառ
 յուզուած, «սեւ կը յուսամ թէ յա-
 ճախ պիտի գաս, վասն զի ես պիտի
 կարօտնամ քեզ եթէ հոս չգտնուիս,
 Բո՛ւ հորդ թէ դուն ինձի ալ փոքրիկ
 արևու ճառագայթ պիտի ըլլաս»,
 «Իրա՛ւ», ըսաւ պղտիկը նորէն իրն-
 դալով: «Ո՛հ, ի՛նչ աղէկ բան: Ես շատ
 կը սիրեմ ըլլալ»:
 Կէս ժամ յետոյ գնաց փոքրիկ ա-
 շակերտը: Պայծառ դուրս ելաւ դպր-
 րոցին դռնէն և գոցեց դանիկա իր
 ետեւէն: Ժպիտ մը կար երեսին վրայ,
 և իր քայլերը, երբ ինք դարձաւ գե-
 ղի երկայն ճամբէն, շատ աւելի թե-
 թե և դիւրաշարժ էին այն ատեն
 քան երբ այդ առաւօտ եկած էր
 նայն ճառքէն: Թռչուններուն երգերը
 կը թուէր թէ իր սիրտը կը մտնէին և
 հոն կը պատասխանուէին: Տերևներ-
 լուն փոխուելու վրայ գտնուող գոյ-
 ները նորօրինակ և զարմանալի գեղե-
 ցիկ կ'երևնային: և լայնարձակ դաշ-
 տերէն ու վերին կապոյտ երկինքէն
 կարծես իրեն եկաւ խաղաղութեան
 անդորրաւէտ զգացում մը երբ ինքնի-
 բեն մ'մնչեց: «Ու՛ր զանօք պղտիկ
 սողոյ մը պիտի արածէ», Ես. ԺԱ. 6:

Աստուածային խանձարուբբը տուած վրան,
 Մարդեացաւ: Անոր սիրտը անրիժ չուշան,
 Հէք մարդկութեան սիրով վառուած՝ եկաւ
 աշխարհ,
 Արեւը հեղուլ, փրկել հոգիք, վանել
 խաւար:
 Եւ հըրեշտակ մը լուսափայլ, երկնաբլուզ,
 Փրկչին ծըռուծք շուտ կ'աւետէ դրացի հոգ-
 ուտը,
 Որք ըշտապաւ յայժամ դիմեն անշուք այրին,
 Հիանալով տեղի ունեցած մեծ հըրուշքին:
 Լոյս մը ծընի յԱրեւելից կողմն աշխարհի,
 Որ կ'աւետէ Փրկչին ծնունդն շնորհալի,
 Կ'առաջնորդէ երեք մագերէն ի բնթղէհէմ,
 Որք զարմացած կու գան տեսնել Սիրոյ
 Երեմ:
 Մանկուծք, դուք ալ ձեր ձայնիւր միտերան
 Բարձրացուցէք մինչև երկնց ահեղ խորան,
 Ուր հըրեշտակներ փառք բարձուած՝ կը
 նըւագեն,
 Զի հեղութեամբ Փրկչին ծը՛ւ ահ հոս՝ ապաքեն:
 Եփրատ Գործէ, ՄԻՆԻԱՆ ՊԱՍՏԱՅԻՆ
 Խարբերք

ՆՈՅՆՄԱՐԻ ՀԱՆՆԵՆՈՒՄԻՆ ՊԱՍՏԱՅԻՆԸ

Ա

Ի Ի Բ

Դ Ը Բ ա Մ

Բ ա ր Ա ք Է Ա

Ա ա ն ա Ն պ ա ս Տ

Ի Բ Ա Պ

Ն Է Տ Պ օ Ա

Ա ք Է Ա Ա ք ա Զ

Թ Է Ղ օ Շ Ն ո Ե մ Ի

Ե Է ն Է Է Ա հ ա ր ն Ո

Բ Ղ ա ս ո ս Ս Կ Ի ն ա մ ո Ն

1. Լուսնային Ուրբաթ: — Էրևանի Գ Յ Յու-
 բունճեան, Թուրքի: — Ինքնամիտ Արքայհամ-
 Լենի: Անոյ: — Վարդան Վարդաբեկեան
 Ուրբաթ: — Սըրժի Ն. Գաղպատեան: Տիրուհի
 — Եղիա Մարգարիտ, Մանուկ Տոնպետեան
 Խաչատուր Յ. Արտանեան:

ՀԱՆՆԵՆՈՒՄԻ ՍՈՒՐԻ ԳՐԱԲԵՆ

Օ՛հ արեւն ինչ
 Ես կը բազմամ 34 տարեկ
 Իմ 2, 6, 5, 13, 7, 23, Գեղեցիկ կոյս աղ-
 չիկ մը:
 Իմ 14, 6, 26, 15, 10, 30, 47, 40, Զարգա-
 տան մը:
 Իմ 29, 13, 31, 1, Երեւի երածիւր մը:
 Իմ 23, 35, 41, 12, Առաւելի իմաստուն մը:
 Իմ 45, 36, 11, 8, 20, 13, Աշխարհակալ մը:
 Իմ 46, 3, 49, 43, 33, 51, Մեծերկրական ծո-
 վան մէջ կողմ մը և քաղաք մը:
 Իմ 40, 52, 4, 5, 41, Անբրկիւղ մարգարէ մը:
 Իմ 28, 38, 9, 20, 24, Աշիւ պտուղ մը:
 Իմ 46, 39, 12, 47, 21, Առաւելաւ ծաղիկ մը:
 Իմ 32, 23, 34, 41, Յակոբ որդիներէն մէկը:
 Իմ 46, 47, 22, 27, Բայակերտ միջերկրութեան
 մը:
 Իմ 48, 49, 37, 42, 48, 50, 51, 53, Հայ
 տուեր:

Տիրուհի Գ. ՏԵՐ ԴԱՉԱՐԵԱՆ

Տարեկան բաժանորդագրի՛ 6 դահ. արծաթ
 կանիկ, ամէն տեղոյ համար:

Ամբրկիւղի Միտիմարաց Ընկերութեան կողմէ՛
 Արտածատէր Ճ. Գ. ԿՐԻՆ

Տնօրէն—Խմբագիր Հ. Ո. ՊԱՐՆԸՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ
 Ի ՅԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՐ ԳՈՅՈՒՆ
 Ֆինանսները Երեւան: Ամբրկիւղի Խան